

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 3

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԳԵՏՈՐԸՐԴԻ ՆԻՍՏԻ

27 սեպտեմբերի 2010թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ղեկավարներ, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման նախարարության ներկայացուցիչ Սարգիս Հովհաննիսյանը:

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների կողմից 2010 թվականի բյուջեների սեփական եկամուտների ընթացիկ հավաքագրման, աշխատավարձերի պարտքերի մարման և առանձին համայնքներում բյուջեների վերանայման խնդրի մասին:  
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Մարդյան/
2. 2010թ. հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի, աշնանացանի և ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ հաստատված աշխատանքային ծրագրի կատարման ընթացքի մասին:  
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ք. Խաչատրյան/
3. Համայնքային սեփականության գույքի նկատմամբ սահմանված կարգով համայնքի իրավունքների պետական գրանցման անհրաժեշտության և դրանց հետ առնչվող խնդիրների մասին:  
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս. Ավետիսյան/
4. Մարզում ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացված աշխատանքների և առկա խնդիրների մասին:  
/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ն. Ավանեսյան/

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ «Մարզի համայնքների կողմից 2010 թվականի բյուջեների սեփական եկամուտների ընթացիկ հավաքագրման, աշխատավարձերի պարտքերի մարման և առանձին համայնքներում բյուջեների վերանայման խնդրի մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Աշոտ Մարդյանը:

Օրակարգի երկրորդ՝ «2010թ. հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի, աշնանացանի և ՀՀ բնապահպանության նախարարության հետ համատեղ հաստատված աշխատանքային ծրագրի կատարման ընթացքի մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ք. Խաչատրյանը:

Օրակարգի երրորդ՝ «Համայնքային սեփականության գույքի նկատմամբ սահմանված կարգով համայնքի իրավունքների պետական գրանցման անհրաժեշտության և դրանց հետ առնչվող խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՆ վարչության պետ Ս. Ավետիսյանը:

Օրակարգի չորրորդ՝ «Մարզում ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացված աշխատանքների և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ն. Ավանեսյանը:

Զեկուցումների շուրջ ելույթներով հանդես եկան Աճանան գյուղական համայնքի ղեկավար Վաչե Ավետիսյանը և Վարդանիձոր գյուղական համայնքի ղեկավար Ալբերտ Բեգլարյանը: /Կցվում են զեկուցումներն ու ելույթները/:

Հայտարարություններով հանդես եկան ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը և ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Լյուդվիգ Հարությունյանը:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Մուրիկ Խաչատրյանը: Նա, ի թիվս այլ հանձնարարականների, օրակարգի առաջին հարցի կապակցությամբ հանձնարարեց համայնքներում պետության կողմից պատվիրակված և պարտադիր լիազորությունների կատարման ընթացքը, մասնավորապես համայնքների կողմից 2010թ. բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ցածր մակարդակի պատճառներն ուսումնասիրելու նպատակով ստորոգծել հանձնաժողով մարզպետի տեղակալ Վ. Գրիգորյանի ղեկավարությամբ և համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների ներգրավմամբ:

ՀՀ Սյունիքի մարզպետ

 Ս. Խաչատրյան